ՆՈՐ ԳՐՔԵՐ

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ — «Երկերի ժողովածու», հատոր 5, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 11000, 648 էջ, գինը՝ 1 ռ. 72 կոպ.։

Չարենցի «Երկերի ժողովածուի» այս հատորն իր մեջ ամփոփում է մեծ գրողի արձակը, հոդվածները և նամակները։ Հատորի խմբագիրն է Ս. Ռ. Աղաբաբյանը, տեքստը պատրաստել և ծանոթագրել է Ա. Գ. Զաքարյանը։

Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ — «Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 286 էջ, գինը՝ 95 կոպ.։

Մենագրության մեջ քննարկվում են Աղվանից աշխարհին վերաբերող պատմա-աշխարհագրական և մշակութային մի շարք հարցեր։ Առանձնապես հետազոտված է այդ երկրի գրի և գրականության պատմությունը։ Առաջ է քաշված այն կարծիքը, որի համաձայն Աղվանից աշխարհում ի սկզբանե (V դարի սկիզբ) հիմնադրվել է ոչ թե մեկ, այլ երկու գիր ու երկու դպրություն՝ աղվանական և հայկական։ Հետագայում, պատմական իրադարձությունների պատճառով, աղվանականը աստիճանաբար վերացել է, տեղի տալով հայկականի։ Հանգամանորեն տրվում է այդ դպրության ընդհանուր պատկերը՝ V—XIII դարերում։

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ — «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները XVIII դարում», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966 թ., տպաքանակը՝ 1000, 224 էջ, գինը՝ 70 կոպ.։

Աշխատությունը լույս է տեսել ռուսերեն լեզվով, ուր հանգամանորեն լուսաբանվում են XVIII դարի հայ-վրացական մշակութային և գրական փոխհարաբերությունները։

Բազմաթիվ արխիվային և ձեռագիր նյութեր, որոնք հայտնաբերել է ինքը հեղինակը, հնարավորություն են ընձեռել ուսումնասիրելու ինչպես թարգմանական, այնպես էլ բնագիր շատ հուշարձաններ, որոնք ստեղծվել են Վրաստանի հայկական բնակավայրերում։

Գրքի խմբագիրն է ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը։